ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«11» օգոստոսի 2022 թվականի № 629

ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ, ԳՆՈՒՄՆԵՐԻ, ԳՈՎԱԶԴԻ, ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՐՈՒԺԱՆ ԼԵՎՈՆԻ ԱՊՐԵՍՅԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի 1.1-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի թիվ 1002-Ն որոշման հավելվածի 21-րդ կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետի (ծածկագիր՝ 2.1-1) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2022 թվականի օգոստոսի 10-ի մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի վերաբերյալ մրցութային հանձնաժողովի եզրակացությունը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետի (ծածկագիր 2.1-1) ժամանակավոր պաշտոնակատար Վարուժան Լևոնի Ապրեսյանին 2022 թվականի օգոստոսի 12-ին ազատել համայնքային ծառայության զբաղեցրած պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2022 թվականի մարտի 24-ին կնքած թիվ 2 ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

Վերջին աշխատանքային օր համարել 2022 թվականի օգոստոսի 11-ը:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ սույն հրամանն ընդունել ի գիտություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. օգոստոսի 11
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«11» օգոստոսի 2022 թվականի № 630

ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՈՒՐԻԶՄԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՄԵԼԱՆՅԱ ԼԵՎՈՆԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի 1.1-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի թիվ 1002-Ն որոշման հավելվածի 21-րդ կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժնի պետի (ծածկագիր՝ 2.1-3) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2022 թվականի օգոստոսի 10-ի մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի վերաբերյալ մրցութային հանձնաժողովի եզրակացությունը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (ծածկագիր՝ 2.1-3) Մելանյա Լևոնի Դանիելյանին 2022 թվականի օգոստոսի 12-ին ազատել համայնքային ծառայության զբաղեցրած պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2022 թվականի մարտի 24-ին կնքած թիվ 4 ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

Վերջին աշխատանքային օր համարել 2022 թվականի օգոստոսի 11-ը:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ սույն հրամանն ընդունել ի գիտություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. օգոստոսի 11
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«11» օգոստոսի 2022 թվականի № 631

ՄԵԼԱՆՅԱ ԼԵՎՈՆԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՈՒՐԻԶՄԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, հիմք ընդունելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 2.1-3) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2022 թվականի օգոստոսի 10-ին անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի վերաբերյալ մրցութային հանձնաժողովի եզրակացությունը և Մելանյա Լևոնի Դանիելյանի դիմումը՝ ***որոշում եմ***.

1. 2022 թվականի օգոստոսի 12-ից Մելանյա Լևոնի Դանիելյանին նշանակել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժնի պետի (ծածկագիր՝ 2.1-3) համայնքային ծառայության պաշտոնում՝ սահմանելով մեկամսյա փորձաշրջան:

2. Աշխատավարձը՝ համաձայն հաստատված պաշտոնային դրույքաչափի՝ 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:

Աշխատավարձը համարել փոփոխված Սպիտակ համայնքի ավագանու կողմից պաշտոնային դրույքաչափի փոփոխմանը համապատասխան:

3. Աշխատանքային գործառույթները՝ համաձայն համայնքային ծառայության պաշտոնի անձնագրի:

4. Աշխատաժամանակի ռեժիմը, ամենամյա արձակուրդի տեսակը և տևողությունը՝ համաձայն աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. օգոստոսի 11
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«11» օգոստոսի 2022 թվականի № 632

ՎԱՐՈՒԺԱՆ ԼԵՎՈՆԻ ԱՊՐԵՍՅԱՆԻՆ ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ, ԳՆՈՒՄՆԵՐԻ, ԳՈՎԱԶԴԻ, ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետի (ծածկագիր՝ 2.1-1) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2022 թվականի օգոստոսի 10-ին անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի վերաբերյալ մրցութային հանձնաժողովի եզրակացությունը և Վարուժան Լևոնի Ապրեսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. 2022 թվականի օգոստոսի 12-ից Վարուժան Լևոնի Ապրեսյանին նշանակել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետի (ծածկագիր՝ 2.1-1) համայնքային ծառայության պաշտոնում:

2. Աշխատավարձը՝ համաձայն հաստատված պաշտոնային դրույքաչափի՝ 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:

Աշխատավարձը համարել փոփոխված Սպիտակ համայնքի ավագանու կողմից պաշտոնային դրույքաչափի փոփոխմանը համապատասխան:

3. Աշխատանքային գործառույթները՝ համաձայն համայնքային ծառայության պաշտոնի անձնագրի:

4. Աշխատաժամանակի ռեժիմը, ամենամյա արձակուրդի տեսակը և տևողությունը՝ համաձայն աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. օգոստոսի 11
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» օգոստոսի 2022թ. N⁰ 633

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի ԹԻՎ 119 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝ որոշում եմ.

1. Սպիտակ համայնքի բնակչության սոցիալական պաշտպանության շրջանակներում համայնքի բնակիչներին սոցիալական ծառայություններ մատուցելու նպատակով ուսումնասիրություններ կատարելու և եզրակացություն տալու համար ստեղծել սոցիալական հարցերի հանձնաժողով հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝

Արտակ Մաթոսյան – Սպիտակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ.

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝

Ազգանուշ Ֆրանգյան - Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

Հանձնաժողովի քարտուղար՝

Քնարիկ Պետրոսյան – Սպիտակ համայնքի ղեկավարի օգնական

Հանձնաժողովի անդամներ՝

Վարուժան Ապրեսյան – Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետ,

Մելանյա Դանիելյան - Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժնի պետ,

Նորայր Յարմալոյան – Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ,

Լուսինե Օհանյան - Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ,

Հասմիկ Մագոյան - Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ,

Ալբերտ Բաբայան - Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի 1-ին կարգի մասնագետ,

Լուսինե Ավետիսյան – Սպիտակ համայնքի ավագանու անդամ (համաձայնությամբ),

Կարեն Սարգսյան - Սպիտակ համայնքի ավագանու անդամ (համաձայնությամբ),

Թաղամասերում լիազոր ներկայացուցիչներ – ըստ բնակչի բնակության վայրի,

Արտաշես Կարապետյան – Հայկական կարմիր խաչի ընկերության Լոռու մարզային մասնաճյուղի Սպիտակ համայնքի ներկայացուցիչ (համաձայնությամբ):

2. Հաստատել սոցիալական հարցերի հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել Սպիտակ համայնքի ղեկավարի 2020 թվականի մայիսի 5-ի «Սոցիալական հարցերի հանձնաժողով ստեղծելու և Սպիտակ համայնքի ղեկավարի 2017 թվականի մարտի 22-ի թիվ 97 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 119 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. օգոստոսի 12
ք. Սպիտակ

Հավելված

Սպիտակ համայնքի ղեկավարի «12»
օգոստոսի 2022թ. թիվ 623 որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Սույն կարգով սահմանվում են սոցիալական հարցերի հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) գործառույթները և դրանց իրականացման ընթացակարգը:

2. Հանձնաժողովը պարտավոր է իր գործառույթները իրականացնել Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան:

3. Հանձնաժողովը իրականացնում է Սպիտակ համայնքում բնակվող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կյանքի և բնակարանային պայմանների ուսումնասիրություն և տալիս եզրակացություն:

4. Հանձնաժողովը ուսումնասիրությունն իրականացնում է Սպիտակ համայնքի ղեկավարի հանձնարարությամբ՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի դիմումի հիման վրա կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և այլ ֆիզիկական անձանց ներկայացրած տեղեկությունների, գրավոր և բանավոր դիմումների, ահազանգերի, զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա:

5. Հանձնաժողովը սոցիալական աշխատողի և այլ անդամի մասնակցությամբ (առնվազն երկու անդամ) հանձնարարականը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է տնային այցելություն, իրականացնում ուսումնասիրություն և կատարում կարիքի գնահատում: Անհրաժեշտության դեպքում տնային այցելությանը կարող է մասնակցել հրավիրված համապատասխան մասնագետը:

6. Տնային այցելության ընթացքում ուսումնասիրվում են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի կենսապայմանները՝ ընտանիքի կազմը, եկամտի չափը և տեսակը, ծախսերի կառուցվածքը, անշարժ և շարժական գույքի նկատմամբ սեփականության իրավունքի առկայությունը, կենցաղային պայմանները, ընտանիքում առկա խնդիրները, միջանձնային հարաբերություններն ընտանիքում, նախկինում ստացած օժանդակությունները, սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-աշխատանքային, սոցիալ-իրավական խնդիրների առկայությունը կամ բացակայությունը, սոցիալական կարիքները կամ դրանց բացակայությունը:

7. Տնային այցելության ուսումնասիրության արդյունքները և համապատասխան փաստաթղթերը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է հանձնաժողովի նախագահին, իսկ նրա բացակայության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի տեղակալին՝ հանձնաժողովի նիստին քննարկելու նպատակով:

8. Հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի տեղակալը յուրաքանչյուր ամիս առնվազն մեկ անգամ հրավիրում է հանձնաժողովի նիստ, որի մասին իրազեկվում է այն անձը (այսուհետ՝ շահառու), որի վերաբերյալ կատարվել է ուսումնասիրություն:

9. Հանձնաժողովի նիստ կարող է հրավիրվել նաև ըստ անհրաժեշտության:

10. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է անդամների կեսից ավելին:

11. Հանձնաժողովի նիստին հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նիստը նախագահում է հանձնաժողովի նախագահի տեղակալը:

12. Հանձնաժողովի նիստն արձանագրում է հանձնաժողովի քարտուղարը:

13. Հանձնաժողովի նիստին հանձնաժողովի քարտուղարի բացակայության դեպքում հանձնաժողովի նախագահը նշանակում է հանձնաժողովի քարտուղար նիստին ներկա անդամներից:

14. Հանձնաժողովի նիստի ընթացքում քննության են առնվում ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված փաստաթղթերը և տեղեկությունները շահառուի վերաբերյալ:

15. Հանձնաժողովի նիստին շահառուի մասնակցության պարագայում

հանձնաժողովը լսում է նրա կարծիքը:

16. Հանձնաժողովի տրամադրության տակ եղած փաստաթղթերը և

տեղեկություններն ուսումնասիրելուց հետո հանձնաժողովի նախագահը հայտարարում է քվեարկության մասին:

17. Լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի նիստը հետաձգվում է:

18. Հանձնաժողովի եզրակացությունն ընդունվում է հանձնաժողովի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

19. Ձայների հավասարության դեպքում որոշիչ է հանձնաժողովի նախագահի ձայնը:

20. Հանձնաժողովի նիստի վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որն իր մեջ ներառում է հանձնաժողովի եզրակացությունը:

21. Հանձնաժողովի նիստի արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նիստին մասնակցած անդամները:

22. Հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի նիստի արձանագրությունը և նիստի ժամանակ ուսումնասիրված փաստաթղթերը հանձնաժողովի նիստից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է համայնքի ղեկավարին համապատասխան որոշում ընդունելու համար:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ՖՐԱՆԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«12» օգոստոսի 2022թ. № 634

«ԱՐՏՈՒՐ ԹՈՐՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՈՒ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 14-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի, հիմք ընդունելով «ԱՐՏՈՒՐ ԹՈՐՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏԻ» անհատ ձեռնարկատիրոջ 2022 թվականի օգոստոսի 12-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ԱՐՏՈՒՐ ԹՈՐՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏԻ» անհատ ձեռնարկատիրոջը (ՀՎՀՀ 66946159) տալ «ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ Ալեք Մանուկյան փ. նրբ.1» հասցեում գտնվող խանութում (հիմնական շինություն՝ 90,7 քառակուսի մետր մակերես) ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն՝ 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. օգոստոսի 12
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«12» օգոստոսի 2022թ. № 635

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀՌԻՓՍԻՄԵ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՈՒ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 14-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Հռիփսիմե Պետրոսյանի 2022 թվականի օգոստոսի 12-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Հռիփսիմե Պետրոսյանին (ՀՎՀՀ 66006346) տալ «ՀՀ Լոռու մարզ, գ. Շիրակամուտ Կրասնոդարյան փ. տ52» հասցեում գտնվող խանութում (հիմնական շինություն՝ 25 քառակուսի մետր մակերես) ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն՝ 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. օգոստոսի 12
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«12» օգոստոսի 2022թ. № 636

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍԱՐԳԻՍ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 14-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Սարգիս Սահակյանի 2022 թվականի օգոստոսի 12-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Սարգիս Սահակյանին (ՀՎՀՀ 66000081) տալ «ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ Սուրեն Ավետիսյան փ. 1/5» հասցեում գտնվող խանութում (հիմնական շինություն՝ 98,1 քառակուսի մետր մակերես) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն՝ 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. օգոստոսի 12
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«12» օգոստոսի 2022թ. № 637

«ԴԱՆԻԵԼՅԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՈՒ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 14-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի, հիմք ընդունելով «ԴԱՆԻԵԼՅԱՆ» ՍՊԸ-Ի 2022 թվականի օգոստոսի 12-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ԴԱՆԻԵԼՅԱՆ» ՍՊԸ-ԻՆ (ՀՎՀՀ 06801811) տալ «ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ Ալեք Մանուկյան փ. 5» հասցեում գտնվող խանութում (հիմնական շինություն՝ 871,91 քառակուսի մետր մակերես) ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն՝ 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. օգոստոսի 12
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«12» օգոստոսի 2022թ. № 638

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0182-0033 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,052 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՑԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ, 60-րդ և 62-րդ կետերով, հաշվի առնելով որ Սպիտակ համայնքում գտնվող 06-006-0182-0033 կադաստրային ծածկագրով 0,052 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող բնակելի տանը տրված «ք. Սպիտակ, Ուզբեկական Կ-1 թաղամաս 18, 18 բնակելի տուն» հասցեն չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներին, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ N 05082022-06-0011 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի առկա հասցեի փոփոխության հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006BU28S6C) և Նորա Վարազդատի Մանուկյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Նորա Վարազդատի Մանուկյանին (ծնված՝ 01.01.1952 թվականին) սեփականության իրավունքով պատկանող՝ 06-006-0182-0033 կադաստրային ծածկագրով 0,052 հեկտար մակերեսով հողամասի, դրա վրա գտնվող 157,1 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան և 27 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակի առկա «ք. Սպիտակ, Ուզբեկական Կ-1 թաղամաս 18, 18 բնակելի տուն» հասցեն փոփոխել «ք. Սպիտակ, Ուզբեկական Կ-1 թաղամաս 18 բնակելի տուն» հասցեով (փոստային դասիչը՝ 1805):
2. Սույն որոշման 1-ին կետով նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ օգոստոսի ____
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«12» օգոստոսի 2022թ. № 639

ԳՈՀԱՐ ՆՈՐԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳԱԲԱՐ ՓՈԽԱՆՑՎԱԾ 06-095-0073-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,0798 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով «Արսեն Իսահակյան Ռուդիկի» Ա/Ձ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2022 թվականի ապրիլի 5-ի վկայագիրը (գրանցված է սեղանամատյանում N 806) և Գոհար Նորիկի Վարդանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Գոհար Նորիկի Վարդանյանին (ծնված 10.10.1962 թվականին) ժառանգաբար փոխանցված Ջրաշեն բնակավայրի 1-ին փողոցի վրա գտնվող, 06-095-0073-0001 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0,0798 հեկտար մակերեսով հողամասի ճշգրտված հատակագիծը:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալ Գ. Չոբանյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. օգոստոս 12
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«12» օգոստոսի 2022թ. № 640

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-052-0049-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,36508 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ, 53-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 29-ի թիվ 1020-Ն որոշումը, Կադաստրի կոմիտեի կողմից հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 060521CEPVXB), «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի Կաթնաջուր բնակավայրում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-052-0049-0001 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասից առանձնացված 0,36508 հեկտար մակերեսով հողամասի հատակագիծը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տալ «Սպիտակ համայնք, գյուղ Կաթնաջուր, 6-րդ փողոց, 5 հողամաս» հասցեն (փոստային դասիչ 1815):

3. Սույն որոշումը տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. օգոստոսի 12
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«12» օգոստոսի 2022թ. № 641

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-087-0029-0017 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,110469 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ, 60-րդ և 62-րդ կետերով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի Շիրակամուտ բնակավայրում գտնվող 06-087-0029-0017 կադաստրային ծածկագրով 0,110469 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող բնակելի տանը տրամադրված «գ. Շիրակամուտ, 36/5» հասցեն չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներին, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման գրանցման թիվ N07072022-06-0014 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի առկա հասցեի փոփոխության հայտի հաստատումը (քաղվածք՝ 060877NCMYQQ) և Հայկանուշ Գեղամի Իվանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Շիրակամուտ բնակավայրում գտնվող 06-087-0029-0017 կադաստրային ծածկագրով, 0,110469 հեկտար մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 89,2 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան առկա «գ. Շիրակամուտ, 36/5» հասցեն փոփոխել «Սպիտակ համայնք, գ. Շիրակամուտ, Կրասնոդարի փողոց, 45 բնակելի տուն» հասցեով (փոստային դասիչը՝ 1820):
2. Սույն որոշման 1-ին կետով նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ.օգոստոսի 12
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«12» օգոստոսի 2022թ. № 642

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ԹԻՎ 52 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2006 թվականի ապրիլի 14-ի թիվ 52 որոշմանը կից ցուցակում Մացակ Մուկուչի Մելոյանի հայրանունը սխալմամբ գրվել է «Մկրտչի», հիմք ընդունելով Մացակ Մուկուչի Մելոյանի անձնագիրը և դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակի քաղաքապետի 2006 թվականի ապրիլի 14-ի «Սպիտակ քաղաքի Այգեստան, Ն. Աճեմյան, Սայաթ-Նովա, Կնունյանց, Ալ. Մանուկյան, Մյասնիկյան, Կամոյի, Թումանյան, Քըրք Քըրքորյան փողոցների բնակիչների տնամերձ հողամասերը և բնակելի տները՝ որպես վերջիններիս սեփականություն ճանաչելու մասին» թիվ 52 որոշմանը կից ցուցակի 292-րդ տողում նշված «Մկրտչի» բառը փոխարինել «Մուկուչի» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. օգոստոսի 12
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 12 » օգոստոսի 2022թ. № 643

2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի՝ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, «Տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժնի պետ Մելանյա Դանիելյանի զեկուցագիրը, 2022 թվականի օգոստոսի 14-ի՝ Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնի կապակցությամբ միջոցառում կազմակերպելու համար մրգային կոմպոզիցիաներ, գինիներ, քաղցրավենիք, նվագակցության խմբի մասնակիցներին հյուրասիրություն՝ սնունդ ձեռք բերելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4237 հոդվածից հատկացնել 116 490 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. օգոստոսի 12
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 12 » օգոստոսի 2022թ. № 644

«ՀՐԱՇՔ ՓՈՔՐԻԿ» ՓԱՌԱՏՈՆԻՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով Վանաձոր քաղաքի «ԲՈՀԵՄ» կամերային թատրոնի տնօրեն Գայանե Ավագյանի գրությունը, օգոստոսի 14-ին Վանաձոր քաղաքում կայանալիք Լոռու և Տավուշի մարզի երեխաների մասնակցությամբ «ՀՐԱՇՔ ՓՈՔՐԻԿ» փառատոնին աջակցելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման 4819 հոդվածից հատկացնել 30 000 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. օգոստոսի 12
ք.Սպիտակ